



20 հունվարի, 2018 թ

2018թ: Մոլորակը հանուն վաղվա

2018թ.-ին «Պաստառ հանուն վաղվա» նախագծի 10-րդ և վերջին հրապարակումն է այս ձևաչափով:

2009թ -ից մինչ այսօր մենք հասել և գերազանցել ենք մեր նախնական նպատակների մեծ մասը: Մենք ստեղծել ենք դիզայներների մեծ համայնք, որոնք այժմ ակտիվորեն ներգրավված են սոցիալական դիզայնի մեջ: Մենք անցկացրել ենք ամբողջ աշխարհով մեկ քննարկումներ և սեմինարներ դարձնելով և համալսարաններում, և մեր մրցույթների համար ստացել ենք տասնյակ հազարավոր պատասառներ:

Սակայն, թերևս, կարևոր է, թե որքան ձեռքբերումներ է ունեցել «Պաստառ հանուն վաղվա»-ն, կարևոր է, թե որքան առաջընթաց է գրանցվել մարդու իրավունքների շարժման շրջանակներում, որը առաջ է եկել վերջին տասնամյակում, նշվելով դեկտեմբերի 10-ին, որպես Մարդու իրավունքների միջազգային օր: Երբ մենք ընտրեցինք դեկտեմբերի 10-ը որպես մեր ամենամյա ցուցահանդեսների օր, մեզ համար կարևոր էր նշել հենց այդ օր, քանի որ զգացել էինք, որ միջազգային հանրության կողմից մի փոքր անտեսվում է: Այժմ ամեն տարի ավելի ու ավելի շատ մարդիկ են նշում այդ օրը որպես մի կարևոր ամսաթիվ օրացույցում և ուրախ ենք, որ կարողացել ենք մի փոքր նպաստել այդ կարգավիճակին:

Այնուամենայնիվ, չնայած մեր բոլոր հաջողություններին, մենք նկատեցինք նաև, որ մեծ ուշադրություն է դարձվում ամենամյա պատասառների մրցույթին, այլ ոչ թե մարդու իրավունքների խնդիրներին, ինչը մեր շարժման հիմնական նպատակն է: Մենք, իհարկե, երջանիկ և հպարտ ենք, որ հազարավոր մարդիկ մասնակցում են մարդու իրավունքների գրաֆիկական դիզայնի մրցույթին, բայց մենք ուզում ենք ուշադրություն դարձնել մարդու իրավունքների վրա, այլ ոչ թե մրցույթի: Ավելին, աշխարհը փոխվում է, և մենք ուզում ենք այդ փոփոխության մի մասը լինել:

Հետևաբար, 2018թ.-ին «Պաստառ հանուն վաղվա»-ն վերջին անգամ հանդես կգա հանրությանը ներկայիս ձևաչափով:

Մենք այժմ աշխատում ենք այն հարցերի շուրջ, թե ինչպես կարող ենք զարգանալ 2019թ.-ին տարբեր գործիքներով, որպեսզի ավելի շատ կարողանանք ուշադրություն դարձնել մարդու իրավունքներին, որոնք առավել քան վտանգված են: Աշխարհի իրադարձությունները ցույց են տալիս, որ բանավեճերը և երկխոսությունները շատ կարևոր են, եթե մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ մենք բոլորս իսկապես հավասար ենք: Մեր նպատակն է 2019թ -ից ի վեր այսպիսի երկխոսություններ վարել, որտեղ և ինչպես հնարավոր է կլինի:

Բայց նախ 2018թ.-ը: Վերջին 9 տարին տոնելու և դեպի ապագա հայացք ուղղելու նպատակով մենք ընտրել ենք այս տարվա թեման, որը ազդում է մեր բոլորի ապագայի վրա; Խոսքը շրջակա միջավայրի մասին է: Նախագահ Մակրոնից մեջբերելով կրկնենք՝ մենք ուզում ենք մեր մոլորակը կրկին լավը դարձնել:

Հետևաբար 2018թ.-ի թեման «Մոլորակ հանուն վաղվա»-ն է: Հայտարարությունը կհրապարակվի փետրվարի 20-ին: Ինչպես նկատեցիք, մեր օրակարգը փոփոխվել է, ինչպես և կենդանի ժյուրիի հետ աշխատանքների ամսաթիվը և ցուցահանդեսի մեկնարկի օրը, որը հանդիսանում է սեպտեմբերի 16-ը՝ Օզոնի շերտի պաշտպանության միջազգային օրը:

Նվազեցրել ենք յուրաքանչյուր անձի կողմից ներկայացված հայտերի թիվը՝ 9-ից 3-ով: Սա ընդգծում է մրցակցության սրտում գտնվող խնդիրների մասին մեր հանձնառությունը, այլ ոչ թե մրցակցության համար ավելի մեծ թվով հայտերի հետապնդումը:

Ահա բոլոր այն ժամկետները, որոնք դուք պետք է իմանաք այս տարվա «Պաստառ հանուն վաղվա» մրցույթին մասնակցելու համար:

Կարեւոր ամսաթվերը

Փետրվարի 20	Հայտարարության տարածում / Մրցույթի մեկնարկ
Մայիսի 10	Հայտերի ընդունման վերջնաժամկետը
Մայիսի 20	Առցանց ժյուրի
Հունիսի 25	Կենդանի ժյուրին
Սեպտեմբերի 16	Համաշխարհային ցուցահանդես՝ օզոնային շերտի պաշտպանության միջազգային օր

Կոնտակտային տվյալներ

4tomorrow association
16 Esplanade Nathalie Sarraute - 75018 PARIS
T. +33 14205 8887